Государственное учреждение
"Бюро по реализации
градостроительных программ"
Министерства градостроительства
Республики Армения

State Agency "Urban Development
Projects Implementation Unit"
at the Ministry of Urban Development
of the Republic of Armenia.

Հայաստանի Հանրապետության
Քաղաքաշինության նախարարության
«Քաղաքաշինական ծրագրերի իրականացման
գրասենյակ» պետական հիմնարկ

0010, ք. Եր ան, Հանրապետության Հրապարակ
Կառավարական տուն 3,
0010, г. Ереван, пл. Республики, Дом Правительства 3,
Governtment House 3, Republic Square,
Tel.: 526550 Fax: 526550

22.01.2014 N ՀԱ1-34-14

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1>> ծածկագրով շրջանակային
համաձայանգիր կնքած բոլոր Մասնակիցներին

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ Քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ԾԻԳ>> պետական հիմնարկի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և հնարավոր մասնակիցների միջև կնքված <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1>> ծածկագրով շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանք /վառելիք/:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով, **մինչև 2014 թվականի փետրվարի 4-ը ժամը 12:00-ն:**

Հայտերը կբացվեն www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով **04.02.2014թ. ժամը 12:00-ին:**

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը /հավելված թիվ 1 և հավելված թիվ 2/: Ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Կայքի միջոցով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (հավելվածներ)՝ հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Մասնակիցը Հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

**- «Պիտանելիության չափորոշիչ».**

ընթացակարգին մասնակցելու դիմում՝ (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն:

**- «Ֆինանսական չափորոշիչ».**

գնային առաջարկ (Հավելված N 2), որը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով մեկ թվով՝ և **կայքում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:** Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> ՊՀ կողմից կազմակերպված գնման ընթացակարգի ծածկագիրն է՝ **ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-14/1:**

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը <<Գնումների մասին>> օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով <<Գնումների մասին>> օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցմամբ)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Տնօրեն՝ Հ. Սարգսյան